ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018-22 թթ.

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2018

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018-22 թթ.

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2018

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի զարգացման 2018-2022 թթ. ռազմավարական ծրագիրը մշակվել է համալսարանի ռազմավարական պլանավորման հանձնաժողովի կողմից:

Ռազմավարական ծրագիրը հաստատվել է 2018 թ.-ի փետրվարի 16-ի գիտական խորհրդի նիստում (արձ. № 6):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ՀԱԱՀ 2012-17 թթ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ	6
ՀԱԱՀ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ	8
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	11
1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	15
2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ	19
3. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	24
4. ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	30
5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	33
6. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ	35
7. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋԱՎԱՅՐ	38
8. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	42
ՀԱՎԵԼՎԱԾ 1	44
ՀԱՎԵԼՎԱԾ 2	45

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018 թվականին ավարտվեց Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 2012-2017 թթ. ռազմավարական ծրագրի գործողության ժամկետը:

Ռազմավարական ծրագրում ամրագրված կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարությունների իրականացումը և ձեռք բերված աշխատանքային փորձը համալսարանին հնարավորություն տվեցին արձանագրելու զգալի դրական արդյունքներ և պատահական չէ, որ վերջին տարիներին ՀՀ ԿԳ նախարարության կողմից իրականացվող բուհերի վարկանիշավորման գործընթացի շրջանակներում՝ տարբեր տարիների համալսարանը զբաղեցնում է առաջինից չորրոդ տեղերը:

Ամենամյա նմանատիպ հետազոտություններ իրականացնող ARES միջազգային ընկերության կողմից կատարված բուհերի վարկանիշավորման արդյունքում 2015 թվականին ՀԱԱՀ-ը արժանացել է բարձր վարկանիշի:

2012 թվականին համալսարանում իրականացվեց ենթակառուցվածքային ինքնավերլուծություն, ինքնագնահատում և արտաքին գնահատում, որոնց արդյունքում «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի կողմից 2015 թվականի մարտի 21-ի № 5 որոշումով համալսարանը 4 տարի ժամկետով ստացավ ենթակառուցվածքային հավատարմագրում:

Գերմանիայի Դաշնության Հավատարմագրման, սերտիֆիկացման և որակի ապահովման ինստիտուտի (ACQUIN) կողմից համալսարանում իրականացվող գերմանալեզու «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական կրթական ծրագրի համար, նույնպես 2016 թվականի սեպտեմբերի 27-ին ստացավ ծրագրային հավատարմագրում:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռազմավարական ծրագրում ամրագրված են 2018-2022 թվականներին համալսարանին առաջնորդող առաքելությունը, տեսլականը, առաջնայնություններն ու գլխավոր նպատակները և դրանց իրականացման հիմնական ուղիները:

ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀԵՆՔ

ՀԱԱՀ զարգացման ռազմավարական ծրագիրը մշակվել է հետևյալ հիմքերի վրա.

- ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր,
- ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թթ. պետական ծրագիր,
- նորմատիվային իրավական ակտերի դրույթներ, որոնք ներառում են ՀՀ կրթության և գիտության զարգացման հիմնական ուղղվածությունները:

ՀԱԱՀ 2012-17 թթ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԿԱ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Ազգաբնակչության թվաքանակի կայուն աճի միտումները, երկրագնդի վրա հաճախակի դարձած բնական և էկոլոգիական աղետները, երաշտները, ջրհեղեղները, հրդեհները և այլ երևույթներ մարդկության պարենային ապահովվածության խնդիրը դարձնում են գերակա:

Համաշխարհային ընդհանրական խնդիրների շարքում Հայաստանի Հանրապետության համար ավելանում են նաև գյուղատնտեսական օգտագործելի՝ մասնավորապես ոռոգելի հողերի սակավությունը, դրանց ոչ արդյունավետ օգտագործումը, հողերի մասնատվածությունը, սպառողական շուկայի մարկետոլոգիական ու գյուղատնտեսության վարման ժամանակակից մենեջմենթի բացակայությունը և այլն:

Այսօր աշխարհի առաջավոր երկրներում ագրոպարենային համակարգի զարգացումն իրականացվում է ագրարային ժամանակակից տեխնոլոգիաների և երկրագործության վարման արդյունավետ ու ինտենսիվ համակարգերի ներդրմամբ, և գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացումը զուգակցվում է շրջակա միջավայրի ու կենսառեսուրսների անվտանգության պահպանման միջոցառումների կիրառմամբ:

Ագրարային քաղաքականության նպատակաուղղված և արդյունավետ իրականացումը, ագրարային ոլորտի զարգացումը, երկրի պարենային անվտանգության և բնակչությանն անվտանգ սննդամթերքով ապահովումն այսօր ՀՀ գյուղատնտեսության զարգացման ռազմավարության գերխնդիրն է և առանց համապատասխան գիտելիքներով ու փորձով օժտված մասնագետների այս ամենի իրականացումը դառնում է անիրատեսական:

Նշված խնդիրների լուծման, կրթական համակարգի բարեփոխումների իրականացման գործում իր ուրույն դերակատարումն ունի Հայաստանի ազգային ագրարային համալսարանը՝ որպես երկրում ագրոպարենային ոլորտի համար կադրեր պատրաստող միակ բուհ:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանն իր ներկա կարգավիճակով, ուսումնագիտական ներուժով և գործունեությամբ հանդիսանում է երկրում ագրոպարենային ոլորտի համար մասնագետներ պատրաստող և մեծ թափ ստացած ու շարունակվող կրթական բարեփոխումներ իրականացնող առաջատար բուհերից մեկը:

Ագրարային համալսարանն իրականացնում է իր դիրքերի ամրապնդմանը, արտաքին գրավչության ապահովմանը, բարձրագույն կրթության ոլորտում մրցունակության բարձրացմանը և գերակա բոլոր ուղղություններով բարձր ցուցանիշների ձեռքբերմանը միտված քաղաքականություն:

Ներկայումս կրթական ոլորտի բարեփոխումներն ընդգրկում են կրթության բովանդակային փոփոխությունների ու կրթության ներքին արդյունավետության բարելավման և միջազգային կրթական տարածքին ինտեգրման խնդիրները, ինչպես նաև հնարավորություն են տալիս լուծելու կրթության համակարգում առկա խնդիրները:

Համալսարանի զարգացման 2012-17 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը նախադրյալներ ստեղծեց ենթակառուցվածքային և ծրագրային բարեփոխումների, կրթական ու գիտական գործընթացների արդիականացման, արտերկրի առաջատար համալսարանների և կազմակերպությունների հետ սերտ կապերի հաստատման և կայուն հիմքեր ստեղծեց համալսարանի հետագա զարգացման համար:

<u>Առկա մարտահրավերները</u>

- Դիմորդների ու ուսանողների թվաքանակի նվազումը:
- Համալսարանի ֆինանսական միջոցների անբավարարությունը և բյուջեի կախվածությունն ուսանողների վարձավճարներից:
- Համալսարանի և աշխատաշուկայի միջև թույլ կապը:
- Միջազգային համագործակցության համար ուսանողության և դասախոսական կազմի օտար լեզուների իմացության ոչ բավարար մակարդակը:
- Միջազգային համագործակցության զարգացման թույլ տեմպերը:

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման քաղաքականությունը Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համար շարունակում է մնալ զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը:

Համալսարանն իր ներկա կարգավիճակով, ուսումնագիտական ու ենթակառուցվածքային ներուժով և իր գործունեությամբ հանդիսանում է երկրում մեծ թափ ստացած կրթական բարեփոխումներ իրականացնող առաջատար բուհերից մեկը, և համալսարանում իրականացվող բարեփոխումների ընթացքն այլևս դարձել է անշրջելի:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

2.1. ՏԵՍԼԱԿԱՆ	Հայաստանի ազգային ագրարային համալսարանն իր մատուցած ծառայությունների շնորհիվ երկրում և տարածաշրջանում ձգտում է դառնալ ագրարային ոլորտի զարգացմանը նպաստող ակադեմիական համալիր և հանդես է գալու որպես գիտելիք ու առաջավոր տեխնոլոգիաներ տարածող, կրթական, խորհրդատվական ու հետազոտական ինովացիոն գործունեություն իրականացնող, ուսանողակենտրոն կրթական միջավայր ու լայն մատչելիություն ապահովող և ձևավորված որակի մշակույթ ունեցող կենտրոն:
2.2. ՀԱԱՀ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ	Հայաստանի ազգային ագրարային համալսարանը նպատակ ունի համակենտրոնացնել կրթական ու գիտական, կադրային և նյութական ներուժը, ապահովել որակյալ կրթություն ու հիմնարար գիտական հետազոտություններ, և պատրաստել ագրարային ոլորտի աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող ու դրանց դինամիկ փոփոխությունները հաշվի առնող մասնագետներ ու գիտաշխատողներ:
2.3. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ	ՀԱԱՀ հիմնական արժեքներն են որակը, էթիկան և մասնագիտական մոտեցումը: **Համալսարանի արժեհամակարգի տարրերն են՝** ▪ տարածաշրջանում ագրարային ոլորտի մասնագետներ պատրաստող առաջատար համալսարանի կարգավիճակ, ▪ ագրոպարենային ոլորտի առանցքային խնդիրների լուծմանն ուղղված կողմնորոշում, ▪ համալսարանի փոխգործունեությունը ռազմավարական գործընկերների հետ՝ պահպանելով սեփական ինքնությունը, ինստիտուցիոնալ ինքնավարությունը և ակադեմիական ազատությունը, ▪ ակտիվ ուսումնառողներ, որոնք ունեն անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ▪ զարգացած մարդկային ներուժ, հայրենասիրական դիրքորոշման ձևավորում, ▪ գիտության և նորարարության առանցքային դերը

	համալսարանի զարգացման գործընթացում, ▪ զարգացած ենթակառուցվածք և նյութատեխնիկական բազա, ▪ ֆինանսական կայունություն, ▪ համալսարանում որակի կառավարման համակարգի ներդրում և զարգացում, ▪ կորպորատիվ մշակույթ և մասնագիտական ճանաչում:
2.4. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ/ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀԱԱՀ 2018-2022 թթ. զարգացման ծրագիրը նպատակաուղղված է ազգային գիտակրթական համակարգի նպատակների և խնդիրների իրականացմանը և ագրոպարենային ոլորտում բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստմանը, մասնավորապես՝ ▪ կրթության, գիտության և արտադրության ինտեգրման հիման վրա աշխատաշուկայում մրցունակ մասնագետների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կատարելագործում, ▪ ագրոպարենային ոլորտի ազգային գերակայություններին համապատասխան գիտահետազոտական գործունեության արդյունավետության բարձրացում, ▪ միջազգային կրթական համակարգում համալսարանի դիրքի ամրապնդման նպատակով միջազգային կրթական տարածքին ինտերգրման գործընթացների ինտենսիվացում, ▪ համալսարանի գիտակրթական ենթակառուցվածքների կատարելագործում: **ՀԱԱՀ-ի հիմնական ռազմավարական ուղղություններն (առաջնահերթություններն) են՝** ➢ կրթական միջավայրի և գործունեության զարգացում, ➢ գիտահետազոտական և նորարարական գործունեության զարգացում, ➢ ագրոպարենային ոլորտի խորհրդատվական գործունեության զարգացում և կատարելագործում,

	➢ կադրային ներուժի զարգացում, ➢ ենթակառուցվածքների և ռեսուրսային կազմի զարգացում, ➢ միջազգային գործունեություն, արտաքին կապերի ընդլայնման և միջազգային զարգացում, ➢ կառավարման համակարգի կատարելագործում և զարգացում, ➢ համալսարանի ֆինանսական գործունեության զարգացում և ֆինանսական կայունության ապահովում:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ
Համալսարանի ռազմավարական նպատակն է բարձրացնել համալսարանի կրթական, գիտահետազոտական, խորհրդատվական և նորարարական գործունեության արդյունավետությունը և թողարկել աշխատաշուկայում մրցունակ և բարձրորակ շրջանավարտներ:
Համալսարանական ռազմավարական խնդիրներն են՝
▪ Մասնագետների պատրաստման բարձր մակարդակ ապահովելով և հաշվի առնելով կադրերի նկատմամբ ներկայացվող ժամանակակից պահանջները՝ բարձրացնել ագրոպարենային ոլորտի համար պատրաստվող շրջանավարտների որակը: ▪ Համալսարանական գիտության վարկանիշի և գիտական գործունեության արդյունավետության բարձրացման հիման վրա զարգացնել գիտական հետազոտությունների և նորարարական գործունեության գերակա ուղղությունները և գիտահետազոտական գործունեության զարգացման համար ստեղծել բարենպաստ պայմաններ: ▪ Տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների համալիրի օգտագործման միջոցով կատարելագործել կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական գործունեության տեղեկատվական ապահովման համակարգը ու առարկայակողմնորոշման և խորհրդատվական գործունեության տեղեկատվական և ժամանակակից գրադարանային ֆոնդը, համակարգչային տեխնիկայի և համապատասխան ծրագրային միջոցների կիրառումով զարգացնել գրադարանային համակարգը, տեղեկատվական համակարգը և գովազդային ու հրատարակչական գործունեությունը:
Ռազմավարության խնդիրների իրականացման մեխանիզմը
Համապատասխան մարդկային ու նյութական ռեսուրսներով և ըստ սահմանված ժամկետների՝ ռազմավարությունում նշված խնդիրների լուծման արդյունավետությունն ապահովող կրթական, գիտահետազոտական ու խորհրդատվական միջոցառումների համալիրի իրականացումն է՝ նպատակային ծրագրերի և կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ պլանների տեսքով:

Միջոցառումներ

Կրթության և ուսուցման տեխնոլոգիաների, կրթական ծրագրերի կառավարման բովանդակության կատարելագործում

- **Կրթության բովանդակության արդիականացում.**
  - ✓ Կրթական ծրագրերի արդիականացում:
  - ✓ Կրթական ծրագրերի ուսումնամեթոդական ապահովվածության արդիականացում:
  - ✓ Համալսարանի շահակից կողմերի ներգրավում ՄԿԾ-երի նախագծման, իրականացման և վերանայման գործընթացներում:
- **Կրթական գործընթացի կառավարման կատարելագործում.**
  - ✓ Կրթական գործընթացի կառավարման սկզբունքների կատարելագործում:
  - ✓ Կրթական գործընթացի կառավարման համակարգի զարգացում և կատարելագործում:
- **Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում և կրթական գործընթացի ենթակառուցվածքի կատարելագործում.**
  - ✓ Ուսուցման գործընթացի տեղեկատվության ապահովման մեխանիզմների ներդրում:
  - ✓ Լսարանների հագեցում նոր նյութատեխնիկական միջոցներով:

Համալսարանի գիտանորարարական գործունեության կազմակերպակառավարչական և կադրային ապահովման կատարելագործում

- **Համալսարանի կառուցվածքի օպտիմալացում.**
  - ✓ Համալսարանի կազմակերպական և կառավարչական կառուցվածքի օպտիմալացում:
- **Համալսարանի կադրային ներուժի կատարելագործում, մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծում.**
  - ✓ Պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական հմտությունների մակարդակի բարձրացում:
  - ✓ Դասախոսական կազմի ակադեմիական փոխանակում:
  - ✓ Կադրային ռեզերվի ձևավորում:
- **Ագրարային կրթության զարգացման ոլորտի կազմակերպությունների, շահակից կողմերի հետ փոխգործունեության կատարելագործում.**
  - ✓ Մասնակցություն կրթական, գիտական և արտադրական ասոցիացիաներում, փորձագիտական հանձնաժողովներում:

Համալսարանի գիտանորարարական ներուժի զարգացում

- **Գիտության և կրթության ինտեգրում.**
- **Գիտամանկավարժական կադրերի գիտական արդյունավետության բարձրացում.**
  - ✓ Գիտական արտադրողականության մեխանիզմների խթանում:
  - ✓ Գիտության գերակա ուղղությունների զարգացում:

Համալսարանի 2018-22 թթ. –ին զարգացման սպասվելիք արդյունքները

- Ուսուցման նոր որակ՝ նորարարական կրթական տեխնոլոգիաների հիման վրա:
- Հարատև ագրարային կրթության զարգացած համակարգ:
- Կատարելագործված գիտական միջավայր, որն ապահովում է ագրարային ոլորտի կիրառական հետազոտություններ:
- Բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ:
- Բարելաված սոցիալական պայմաններ ուսումնառողների և համալսարանի աշխատակիցների համար:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԸՍՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Նպատակ 1. Կրթական գործունեություն	Բարձրացնել կրթական գործընթացների և կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը Եվրոպական կրթական տարածքի չափորոշիչներին և ագրարային ոլորտի ժամանակակից պահանջներին համապատասխան:
Նպատակ 2. Հետազոտություն և զարգացում	Բարձրացնել հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների արդյունավետությունը, միջազգայնացնել գիտական գործունեությունը, ներդնել գիտական արդյունքները, ամրապնդել գիտության կրթության և արտադրության կապը:
Նպատակ 3. Խորհրդատվական գործունեություն	Ապահովել աջակցություն և մշակել միջոցառումներ ուղղված Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի տնտեսվարող սուբյեկտներում և ֆերմերային տնտեսություններում ագրոարտադրական գործունեության արդյունավետության բարձրացմանը, պարենային անվտանգության ռիսկերի նվազեցմանը և բնապահպանական հիմնահարցերի լուծմանը:
Նպատակ 4. Կադրային ներուժի զարգացում	Համալսարանի զարգացման ծրագրին համապատասխան, հեռանկարային խնդիրների լուծման ապահովմանը միտված ապահովել կադրային ներուժի ցարգացումը:
Նպատակ 5. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բարելավել և զարգացնել համալսարանի ենթակառուցվածքները, որոնք կբավարարեն կրթական գործունեությունը ապահովող ժամանանակից պահանջները:
Նպատակ 6. Արտաքին կապեր և միջազգայնացում	Ընդլայնել համալսարանի միջազգային ճանաչելիությունը, համագործակցության շրջանակն ու ձևաչափը, խթանել համալսարանի շահակիցների մասնակցությունը միջազգային ծրագրերին:
Նպատակ 7. Կառավարման համակարգ և հակակոռուպցիոն միջավայր	Կատարելագործել համալսարանի կառավարման համակարգը և ապահովել կառավարման արդյունավետությունը և թափանցիկությունը:
Նպատակ 8. Ֆինանսատնտեսական գործունեություն	Ապահովել համալսարանի ֆինանսական համակարգի կայունությունը, բարձրացնել ֆինանսական հոսքերի կառավարման արդյունավետությունը՝ արդիականացնելով ֆինանսների կառավարման գործընթացը և ներգրավելով ֆինանսական հոսքեր արտաքին աղբյուրներից:

1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նպատակ

Բարձրացնել կրթական գործընթացների և կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը Եվրոպական կրթական տարածքի չափորոշիչներին և ագրարային ոլորտի ժամանակակից պահանջներին համապատասխան:

Խնդիր 1.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Որակավորումների ազգային (ՈԱՇ) և ոլորտային (ՈՈՇ) շրջանակներին և ագրոպարենային ոլորտի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան վերափոխել և բարելավել մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) կառուցվածքը և բովանդակությունը:	Վերամշակել բակալավրի աստիճանի կրթական ծրագրերը՝ ՀՀ որակավորումների ազգային (ՈԱՇ) շրջանակին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:	ՈԱՇ-ի 6-րդ մակարդակի պահանջներին համապատասխան մշակված և գործածության մեջ դրված բակալավրի կրթական ծրագրեր:
	Վերամշակել մագիստրոսի աստիճանի կրթական ծրագրերը՝ ՀՀ որակավորումների ազգային (ՈԱՇ) շրջանակին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:	ՈԱՇ-ի 7-րդ մակարդակի պահանջներին համապատասխան մշակված և գործածության մեջ դրված մագիստրոսական կրթական ծրագրեր:
	Ագրոպարենային ոլորտի բոլոր ուղղություններով ներդնել որակյալ, գործնական հմտություններով զինված մասնագետների պատրաստման, շուկայի կոնկրետ պահանջները բավարարող կիրառական բակալավրի կրթական ծրագրեր:	Բակալավրի շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրերի իրականացումից:
	Ապահովել ԿԾ-երի իրականացման կոմպետենտային մոտեցումը և ակադեմիական գիտելիքների ու գործնական հմտությունների փոխկապակցվածությունը:	Մագիստրատուրայի շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրերի իրականացումից:
	Իրականացնել համալսարանի մասնագիտությունների կրթական ծրագրերի ինքնավերլուծություն՝ արտաքին գնահատմանը մասնակցելու նպատակով:	Հավատարմագրված 30 մասնագիտությունների կրթական ծրագրեր:

Խնդիր 2.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Արդիականացնել կրթական գործընթացի կազմակերպման համակարգը, մասնավորապես ուսուցման և գնահատման համակարգերը:	Անցում կատարել ակտիվ և ինտերակտիվ ուսուցման մեթոդներով դասավանդման:	Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառմամբ դասընթացների մասնաբաժինն ընդհանուրի նկատմամբ 60/40:
	Վերանայել և կատարելագործել ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգը:	Վերանայված և գործածության մեջ դրված ուսանողների գնահատման ճկուն համակարգ:
	Ներդնել ֆորմատիվ գնահատման նոր ձևեր:	Ուսումնառողների ուսուցմանը նպաստող ժամանակակից կրթական համակարգ:
	Ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով՝ ներդնել նոր կրթական տեխնոլոգիաներ՝ կրթության որակի միջազգային չափորոշիչներին համապատասխան:	Ուսումնական պլաններում դասախոսական և գործնական ուսումնական պարապմունքների հարաբերակցությունը 40/60: Ըստ մագիստրոսական ծրագրերի լսարանային պարապմունքների ընդհանուր ծավալում ժամերի մասնաբաժինը, որոնք իրականացվում են գիտական սեմինարների ձևով 60/40:

Խնդիր 3.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Ստեղծել որակապես նոր բաց էլեկտրոնային գիտակրթական միջավայր՝ համալսարանի ուսանողների ուսումնական ինքնուրույն աշխատանքի կատարելագործման համար՝ ապահովելով ուսումնառողների ազատ մուտքը դեպի տեղեկատվական ռեսուրսներ և հաղորդակցումը դասախոսների հետ:	Արդիականացնել էլեկտրոնային ուսուցման մեթոդների և հեռավար կրթական տեխնոլոգիաների տարրերի իրականացումը թույլատրող կրթական տեղեկատվական միջավայրը:	Ներդրված և արդիականացված էլեկտրոնային ուսուցման կրթական տեղեկատվական միջավայր: Արդիականացված Moodle համակարգի առկայություն: Համալսարանի մասնաճյուղերի համար հեռավար ուսուցման կազմակերպման լսարանային ժամանակակից համակարգ:
	Զնավորել էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաները և միջոցները:	Գործածության մեջ դրված արդյունավետ էլեկտրոնային գրադարանային համակարգ:
	Գիտական գրադարանը վերակառուցել գիտական-տեղեկատվական գրադարանայի համալիրի:	Համալսարանում համացանցով հասանելի արտասահմանյան փակ գրադարանների թվի ավելացում 20 %-ով:
	Զարգացնել համալսարանի էլեկտրոնային գրադարանային համակարգը և համագործակցել արտերկրյա հրատարակչությունների հետ: Կազմակերպել հաշվառման և գրքի տրամադրման էլեկտրոնային համակարգ:	Կրթական ծրագրերի՝ էլեկտրոնային ուսումնական նյութերով մինչև 70 % աճի ապահովում:

Խնդիր 1.4.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Զարգացնել մասնագիտական կողմնորոշման համակարգը, ընդլայնել ուսանողական համակազմի համալրման համակարգը:	Կատարելագործել ՀՀ տարածաշրջաններում հանրակրթական դպրոցի աշակերտների հետ մասնագիտական կողմնորոշման աշխատանքները՝ նոր մեխանիզմների ներդրման հաշվին:	Ըստ ոլորտային՝ ինժեներական, անասնաբուժական և այլ կրթական ծրագրերի՝ նպատակային մրցույթի մասնակիցների թվի ավելացում 2017թ.-ի նկատմամբ նվազագույնը 5-%-ով:
	Զարգացնել ռազմավարական գործընկերների հետ համագործակցությունը, անցկացնել մասնագիտական կողմնորոշման համատեղ աշխատանքներ: Կազմակերպել օլիմպիադաներ՝ ներգրավելով ՀՀ տարբեր տարածաշրջանների աշակերտների:	Հանրապետական օլիմպիադաներին ՀԱԱՀ-ի կողմից ուսանողների մասնակցությունը և տեղերի գրավումը: Հայաստանի այլ տարածաշրջաններից և որոշակի պետություններից ուսանողների մասնաբաժնի ավելացում 8 %-ով:
	Մշակել մագիստրատուրա ընդունվելու համար ավագ կուրսերի և բուհերի շրջանավարտների գրավման մեխանիզմներ:	Այլ բուհերի շրջանավարտների մագիստրատուրա ընդունվողների մասնաբաժնի ավելացում 10 %-ով:
	Ձևավորել պոտենցիալ դիմորդների աջակցության ցանց:	
	Կատարելագործել մասնագիտական կողմնորոշման աշխատանքները քոլեջների ուսանողների հետ:	Միջին մասնագիտական կրթության բազայի հիման վրա ընդունվող դիմորդների թվի ավելացում 25 %-ով:

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ռազմավարական նպատակ

Բարձրացնել հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների արդյունավետությունը, միջազգայնացնել գիտական գործունեությունը, ներդնել գիտական արդյունքները, ամրապնդել գիտության, կրթության և արտադրության կապը:

Խնդիր 1.	**Միջոցառումներ**	**Առաջընթացի գնահատման ցուցիչներ**
Արդիականացնել գիտության և առաջատար տեխնոլոգիաների զարգացումն ապահովող ենթակառուցվածքները՝ ներառյալ գիտահետազոտական ոլորտի նյութատեխնիկական բազան:	Ստեղծել ժամանակակից պահանջները բավարարող գիտահետազոտական գործունեության իրականացման ծրագրային հենքը:	Գիտական խորհրդի կողմից հաստատված գիտահետազոտական գործունեության իրականացման ծրագրային փաթեթի առկայություն:
	Զարգացնել գիտահետազոտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները:	Գիտահետազոտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ՝ ժամանակակից պահանջները բավարարող գործուն: ենթակառուցվածքների առկայություն:
	Ապահովել ասպիրանտուրան ավարտած և թեկնածուական ատենախոսությունը պաշտպանածների ներգրավումն ուսումնական և գիտական գործունեության մեջ:	Ասպիրանտուրա ավարտած երիտասարդ դասախոսների թվի աճ 2017 թ.-ի նկատմամբ՝ 5 % -ով: Ասպիրանտուրա ավարտած երիտասարդ գիտնականների թվի աճ 2017 թ.-ի նկատմամբ՝ 5 % -ով:
	Արդիականացնել առկա պրոբլեմային լաբորատորիաների նյութատեխնիկական հագեցվածությունը:	Ժամանակակից նյութատեխնիկական բազայով հագեցված 2 պրոբլեմային լաբորատորիա:
	Ստեղծել գիտական նոր պրոբլեմային լաբորատորիաներ:	Երկու նոր գիտական լաբորատորիայի առկայություն:

Խնդիր 2.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Ապահովել դասախոսական կազմի և ուսումնառողների ներգրավվածությունը համալսարանում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներում :	Մշակել համալսարանում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներում և ծրագրերում դասախոսական կազմի և ուսումնառողների ներգրավվածության ապահովման և խրախուսման քաղաքականությունը, ընթացակարգը և մեխանիզմները:	Գիտական խորհրդի կողմից հաստատված և գործածության մեջ դրված՝ դասախոսական կազմի և ուսումնառողների համալսարանում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածության ապահովման և խրախուսման քաղաքականությունը, ընթացակարգը և մեխանիզմները:
	Բարձրացնել հանրապետական և միջազգային հետազոտական ծրագրերում դասախոսական կազմի, մագիստրանտների և ասպիրանտների ներգրավվածության մակարդակը:	Հանրապետական և միջազգային հետազոտական ծրագրերում դասախոսական կազմի ներգրավվածության աճ 2017 թ.-ի նկատմամբ՝ 10 % -ով: Հանրապետական և միջազգային հետազոտական ծրագրերում մագիստրանտների և ասպիրանտների ներգրավվածության աճ 2017 թ.-ի նկատմամբ՝ 5 % -ով:
	Խրախուսել առավել արդյունավետ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող աշխատակիցներին և ասպիրանտներին:	Հետազոտական աշխատանքներում համալսարանի աշխատակիցների և ասպիրանտների ներգրավվածության աճ 2017 թ.-ի նկատմամբ՝ 10 %-ով:
	Խրախուսել ՈՒԳԸ-ում ուսանողների մասնակցությունը:	Հետազոտական աշխատանքներում մագիստրանտների ներգրավվածության աճ 2017 թ.-ի նկատմամբ՝ 10 %-ով:

Խնդիր 3.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Բարձրացնել գիտահետազոտական աշխատանքների իրականացման արդյունավետությունը և գիտական հոդվածների հրատարակությունը ամսագրերում և պարբերականներում:	Մշակել համալսարանի դասախոսական կազմի գիտական գործունեությամբ զբաղվելու ակտիվությունը խթանելու միջոցառումներ:	Դասախոսական կազմի գիտական գործունեությունը խթանող մշակված միջոցառումների ծրագիր:
	Մշակել միջոցառումներ «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տեղեկագիր» գիտական ամսագիրը բարձր վարկանիշ ունեցող գիտական միջազգային պարբերականների ցանկում ներառելու ուղղությամբ:	«Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տեղեկագիր» գիտական ամսագիրը բարձր վարկանիշ ունեցող գիտական միջազգային պարբերականների ցանկում ներառելու ծրագրի առկայություն:
	Բարձրացնել գիտական աշխատանքների հրատարակությունը ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված և արտերկրյա գիտական ամսագրերում:	ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված և արտերկրյա գիտական ամսագրերում գիտական հոդվածների տպագրության աճ 2017 թ.-ի նկատմամբ՝ 15 %-ով:

Խնդիր 4.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Գիտահետազոտական գործունեության և ագրարային արտադրության կապի ամրապնդում:	Գյուղատնտեսական արտադրության կարիքների բացահայտմանը և լուծմանն ուղղված գիտահետազոտական գործունեության իրականացման մեխանիզմների մշակում:	Գյուղատնտեսական արտադրության կարիքների բացահայտման և լուծման գործուն մեխանիզմների կիրառության արդյունքներ:
	Գյուղատնտեսական արտադրությունից հետազոտական պատվերների ձևավորման մեխանիզմների մշակում:	Հետազոտական պատվերների ձևավորման մեխանիզմների կիրառության արդյունքներ:
	Գյուղատնտեսական արտադրությունում հետազոտական արդյունքների ներդրման մեխանիզմների և ընթացակարգերի մշակում:	Հետազոտական արդյունքների ներդրման գործուն մեխանիզմների և ընթացակարգերի առկայություն:
	Գիտահետազոտական արդյունքների ներդրման և ապրանքայնացման մեխանիզմների մշակում և իրականացում:	Գիտահետազոտական արդյունքների ներդրման և ապրանքայնացման 20% -ի ապահովում:

Խնդիր 5.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Բարձրացնել հետազոտական գործունեության միջազգայնացման մակարդակը:	Ամրապնդել կապը ագրոպարենային ոլորտի միջազգային հետազոտական կազմակերպությունների և կենտրոնների հետ:	Օտարերկրյա համալսարանների գիտական կենտրոնների և գիտահետազոտական հաստատությունների հետ գործող պայմանագրերի թվի աճ 2017 թ.-ի նկատմամբ՝ 10 %-ով:
	Ակտիվացնել կազմակերպվող գիտաժողովներին համալսարանի և առաջատար օտարերկրյա համալսարանների ներկայացուցիչների մասնակցությունը:	Կազմակերպվող միջազգային գիտաժողովներին մասնակիցների թվի աճ:
	Ապահովել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների մասնակցությունն այլ երկրների գիտաժողովներին:	Այլ երկրների գիտակրթական կառույցներում կազմակերպվող գիտաժողովներում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների մասնակցության աճ 10 %-ով:
	Ակտիվացնել համալսարանի մասնակցությունը միջազգային գիտական դրամաշնորհային ծրագրերին:	Միջազգային գիտական դրամաշնորհային ծրագրերի հաշվին ֆինանսավորման կայունության ապահովում:
	Ակտիվացնել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի համագործակցությունը արտասահմանյան գործընկերների հետ:	Միջազգային վարկանիշավորման համակարգերում ներառված գիտական ամսագրերում գիտական հոդվածների տպագրության աճ 2017 թ.-ի նկատմամբ՝ 10 %-ով:
	Ակտիվացնել գիտական աշխատանքների հրատարակությունը միջազգային վարկանիշավորման համակարգերում (Web of Science, Scopus և այլն) ներառված գիտական ամսագրերում:	

3. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նպատակ.

Ապահովել աջակցություն և մշակել միջոցառումներ ուղղված Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի տնտեսվարող սուբյեկտներում ու ֆերմերային տնտեսություններում ագրոարտադրական գործունեության արդյունավետության բարձրացմանը, պարենային անվտանգության ռիսկերի նվազեցմանը և բնապահպանական հիմնահարցերի լուծմանը:

Խնդիր 1.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Հստակեցնել Հայաստանի ազգային ազարարային համալսարանի խորհրդատվական և տեղեկատվական գործունեության հիմնական ուղղությունները, իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ:	Ճշգրտել և հստակեցնել ՀԱԱՀ-ում խորհրդատվական և տեղեկատվական աշխատանքներ իրականացնող մասնագիտական ամբիոնների ցանկը, կազմը, նյութատեխնիկական բազան, խորհրդատվական աշխատանքի կարողություններ և հմտություններ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմը:	Համալսարանի գիտական խորհրդի կողմից խորհրդատվական և տեղեկատվական համակարգի կառուցվածքի և գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ հաստատված փաստաթուղթ:
	Համալսարանում պոտենցիալ խորհրդատվական գործունեություն մատուցող պրոֆեսորադասախոսական կազմի համար սահմանել խորհրդատվության մատուցման ժամային ծանրաբեռնվածություն, այն ընդգրկելով իր ժամային ծանրաբեռնվածության մեջ:	Մասնագիտական ամբիոնների ներգրավվածության աստիճանի և ներուժի քանակական ցուցանիշների առկայությունը:
	Դասակարգել Համալսարանի կողմից մատուցվող խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունները, սահմանել դրանց տեխնիկական պայմանները և չափորոշիչները:	

Խնդիր 1.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
	Մշակել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մասնագիտական ամբիոնների կողմից իրականացվող խորհրդատվական և տեղեկատվական գործունեության չափորոշիչները և տեխնիկական պայմանները, խորհրդատվության մատուցման պլան-ժամանակացույցը:	

Խնդիր 2.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Հզորացնել Համալսարանի խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ մատուցող պրոֆեսորադասախոսական անձնակազմի կարողությունները և հմտությունները, բարձրացնել խորհրդատվության և տեղեկատվության մատուցման արդյունավետությունը, կայուն զարգացնել խորհրդատվական և տեղեկատվական համակարգը:	Համալսարանի խորհրդատու պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում կազմակերպել համապատասխան մասնագիտական դասընթացներ՝ ապահովելով նրանց որակավորման բարձրացումը և վերաորակավորումը: Համալսարանի խորհրդատու պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար ապահովել գիտության նվաճումների, նոր տեխնոլոգիաների և միջազգային փորձի հասանելիությունը, բարձրացնել տեղեկացվածության մակարդակը: Ընդլայնել միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը, մշակել համատեղ միջոցառումներ և ծրագրեր, կազմակերպել փոխայցելություններ, գիտաժողովներ, սեմինարներ: Հստակեցնել խորհրդատվական և տեղեկատվական համակարգի ֆինանսական աղբյուրները և իրականացնել դրանց կայունությանն ուղղված միջոցառումներ: Համալսարանի տեղեկատվական և ինովացիոն տեխնոլոգիական բազայի վրա ստեղծել խորհրդատվության մատուցման վիրտուալ ցանց՝ խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցման անվճար/սահմանափակ/ և վճարովի/ անսահմանափակ/ հնարավորություններով:	Համալսարանի վերապատրաստված, վերաորակավորված խորհրդատու պրոֆեսորադասախոսական անձնակազմ: Մասնագիտական հմտությունների և կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումների արդյունքները միջազգային փորձի ձեռք բերման քանակական ցուցանիշներում, ինովացիոն գիտելիքներ:

Խնդիր 3.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի, գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում և վերամշակող ձեռնարկություններում ըստ մասնագիտացման ուղղությունների բացահայտել խորհրդատվության մատուցման առաջնային կարիքները:	Գյուղացիական, ֆերմերային տնտեսությունների և վերամշակող ձեռնարկությունների ագրոարտադրական գործունեության վերաբերյալ ստեղծել տեղեկատվական բազա՝ ըստ մասնագիտացման ուղղությունների:	Ֆերմերային և գյուղացիական տնտեսությունների բացահայտված և խմբավորված կարիքներ:
	Մասնագիտական ամբիոնների կողմից մշակել խորհրդատվական և տեղեկատվական աշխատանքների հիմնական ոլորտները, թեմաները, թիրախները: Կազմել և ներկայացնել տարբեր մարզերի, գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում և վերամշակող ձեռնարկություններում խորհրդատվության և տեղեկատվության կարիքների բացահայտման պլան-ժամանակացույց: Մշակել կարիքների բացահայտման հարցաթերթիկներ և տրամադրել գյուղացիական, ֆերմերային տնտեսություններին և վերամշակող ձեռնարկություններին: Իրականացնել կարիքների բացահայտում շահառուներից՝ ձևավորված նպատակային, թիրախային խմբերում՝ որակական և քանակական մեթոդներով: Հավաքագրել, վերլուծել և ամփոփել արդյունքները, դասակարգել ըստ բազային գիտելիքների ավելացման, գործնական հմտությունների և կարողությունների հզորացման, արտադրության մեջ:	Առաջնահերթությունների վերլուծության արդյունքներ՝ ներառյալ՝ ձեռք բերված բազային գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման արդյունքները, արտադրությունում ներդրված ինովացիոն տեխնոլոգիաների քանակական և որակական ցուցանիշները:

Խնդիր 4.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Կազմակերպել տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական, փորձացուցադրական սեմինարներ գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում, վերամշակող ձեռնարկություններում, բարձրացնել գյուղատնտեսական արտադրության մասնագետների որակավորումը և կազմակերպել գյուղատնտեսական կրթություն չունեցող ֆերմերների նախնական ուսուցում:	Մասնագիտական ամբիոնների, մասնագետ-խորհրդատուների կողմից ճշգրտել խորհրդատվական գործունեության թեմաները, դրանց բովանդակության վերաբերյալ մշակել և տպագրել խորհրդատվական թերթիկներ և գրքույկներ: Համալսարանի ուսումնափորձնական տնտեսության բազայի վրա ստեղծել տիպային փորձացուցադրական տեղամասեր՝ դաշտային օրերի, սեմինարների կազմակերպման համար: Առաջավոր ֆերմերային տնտեսություններում կազմակերպել սեմինարներ և դաշտային օրեր: Մարզպետարանների հետ համատեղ բացահայտել գյուղատնտեսական արտադրության մասնագետների որակավորման բարձրացման և գյուղատնտեսական կրթություն չունեցող ֆերմերների վերապատրաստման կարիքները և կազմակերպել ուսուցողական սեմինարներ մարզերում և համալսարանում:	Տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական, փորձացուցադրական սեմինարներին ֆերմերների, ագրոբիզնեսմենների մասնակցության տեսակարար կշիռը: Խորհրդատվական սեմինարներին ֆերմերների, ագրոբիզնեսմենների մասնակցության արդյունքները՝ գնահատականը, կարծիքները, առաջարկությունները (գնահատականների արդյունքների ամփոփում):

Խնդիր 5.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Ապահովել մասնագիտական կողմնորոշման աջակցություն ՀՀ գյուղական համայնքների պատանիների շրջանում, դպրոցներում համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից կազմակերպել մասնագիտական կողմնորոշմանն ուղղված ցուցադրական դասընթացներ:	Համայնքապետարանների հետ համագործակցության ճանապարհով գյուղական դպրոցներում ստեղծել մասնագիտական կողմնորոշմամբ պատանեկան խմբակներ, ընտրել պատանեկան խմբի ղեկավար:	Գյուղական համայնքային դպրոցներում ստեղծված պատանեկան խմբակների տեսակարար կշիռը:
	Մասնագիտական ամբիոնների կողմից մշակել պատանեկան ակումբների հետ տարվող ուսուցողական դասընթացների պատասխանատու խորհրդատուներ, մշակել գործնական գիտելիքների և կարողությունների զարգացմանն աջակցող թեմաներ՝ հաշվի առնելով համայնքային ագրոարտադրական զարգացման առաջնահերթությունները:	Խմբերում ընդգրկված պատանիների թվաքանակը, դրանց մասնագիտական կողմնորոշման քանակական և որակական ցուցանիշները:
	Պատանեկան խմբերի հետ համատեղ մշակել ուսուցողական դասընթացների վարման պլան-ժամանակացույցը, նյութերի բովանդակությունը, կազմակերպել դրանց տպագրությունը, և այն տրամադրել պատանեկան խմբակներին:	Դպրոցական, համայնքային, մարզային, հանրապետական տարբեր մրցույթներին, շնորհանդեսներին, էքսկուրսիաներին մասնակցության բացարձակ ցուցանիշները:
	Կազմակերպել դպրոցական, համայնքային, մարզային և հանրապետական /ՀԱԱՀ-ում/ մակարդակներում պատանեկան մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացման ցուցադրական շնորհանդեսներ, մրցույթներ և էքսկուրսիաներ:	

4. ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ռազմավարական նպատակ

Համալսարանի զարգացման ծրագրին համապատասխան, հեռանկարային խնդիրների լուծման ապահովմանը միտված ապահովել կադրային ներուժի զարգացումը:

Խնդիր 1.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Բարձրացնել Համալսարանի վարչական, պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական հմտությունները և որակավորման մակարդակը՝ որպես կրթության և գիտական հետազոտությունների որակի ապահովման պայման:	Երիտասարդ դասախոսների մոտ զարգացնել տեղեկատվական տեխնոլոգիաներին և օտար լեզուներին տիրապետելու կարողությունները:	Տեղեկատվական և ինովացիոն մանկավարժական տեխնոլոգիաների, օտար լեզուների գծով վերապատրաստված պրոֆեսորադասախոսական կազմի թվի աճ՝ 35 %-ով:
	Զարգացնել դասախոսների վերապատրաստումների կազմակերպման համակարգը և կատարելագործել որակավորման բարձրացմանն ուղղված ծրագրերը:	Համալսարանի կադրերի որակավորման բարձրացմանը ուղղված արդիական ծրագրերի առկայություն:
	Ստեղծել որակավորման բարձրացման և վերապատրաստման համար պայմաններ՝ օգտագործելով առաջատար հանրապետական և այլ ճանաչված օտարերկրյա համալսարանների և կազմակերպությունների հետ փորձի փոխանակման տարբեր ձևեր:	Որակավորման բարձրացման և վերապատրաստման նպատակով առաջատար տարածաշրջանային և միջազգային համալսարաններ ուղարկված աշխատակիցների թվի աճ՝ 20 %-ով:
	Պարբերաբար զարգացնել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակավորումը՝ դասավանդողների մոտ մասնագիտական առանցքային կոմպետենցիաների կատարելագործման նպատակով:	Մասնագիտական որակավորումը բարձրացրած դասախոսների թվի աճ՝ 30 %-ով:
	Վարչական կազմի շրջանում կազմակերպել վերապատրաստումներ՝ ուղղված կառավարման հմտությունների զարգացմանը:	Վերապատրաստված վարչական անձնակազմ:

Խնդիր 2.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Շարունակել Համալսարանի կադրային քաղաքականության իրականացումը՝ համալրելով կադրերը բարձր որակավորում ունեցող անձնակազմով:	Բարելավել համալսարանի անձնակազմի կազմակեպահաստիքային կառուցվածքը՝ հաշվի առնելով կառավարման գործընթացների և ռեսուրսային ապահովվածության օպտիմալացումը:	Համալսարանի անձնակազմի կազմակերպահաստիքային գործուն կառուցվածք:
	Մշակել աշխատանքի նկարագրեր վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համար:	Համալսարանի վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համար համար մշակված և հաստատված աշխատանքի նկարագրեր:
	Ուսումնական գործընթացում ներգրավել առաջատար տեղական և արտերկրյա համալսարանների դասախոսներ:	Ուսումնական գործընթացում ներգրավված առաջատար տեղային և արտասահմանյան համալսարանների գործընկեր դասախոսների թվի աճ՝ 10 %-ով:
	Զարգացնել ատենախոսություն պաշտպանող դասախոսների և գիտաշխատողների աջակցման համակարգը:	Մինչև 55 տարեկան գիտությունների դոկտորի աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձանց աճ 8 %-ով: Մինչև 35 տարեկան գիտությունների թեկնածուի աստիճան և դոցենտի գիտական կոչում ունեցող անձանց աճ 15 %-ով:
	Ապահովել ասպիրանտուրան ավարտածներին աշխատանքով՝ որպես գիտ. աշխատողներ և դասավանդող անձնակազմ:	Ասպիանտուրան ավարտած և համալսարանում աշխատող շրջանավարտների թվի աճ 2017 թ.-ի նկատմամբ:

Խնդիր 2.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
	Զնավորել երիտասարդ դասախոսների խնամակալության (մենթորության) համակարգը:	Գործուն երիտասարդ դասախոսների խնամակալության (մենթորության) համակարգ:
	Զարգացնել ստաժավորման համակարգը, ապահովել երիտասարդ դասախոսների և գիտական աշխատողների որակավորման և կոմպետենցիաների բարձրացումն արտասահմանյան առաջատար համալսարաններում և կազմակերպություններում:	Արտասահմանյան առաջատար համալսարաններում և կազմակերպություններում վերապատրաստված շուրջ 100 դասախոս և գիտ. աշխատող:

Խնդիր 3.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Ապահովել աշխատակիցների սոցիալական աջակցման մեխանիզմների կատարելագործումը	Զնավորել սոցիալական աջակցության համակարգ՝ ապահովելով դրա արդյունավետությունը:	Սոցիալական աջակցության գործուն համակարգի առկայություն
	Բարձրացնել աշխատակիցների աշխատավարձը՝ հաշվի առնելով ՀՀ-ում գնաճի տեմպերը:	Դասախոսական կազմի վարկանիշային (ռեյտինգային) գնահատման ճկուն համակարգի առկայություն
	Իրականացնել սոցիալական աջակցության տարաբնույթ ծրագրեր:	Համալսարանի աշխատակիցների բավարարվածությունն իրականացված ծրագրերից:

5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ռազմավարական նպատակ

Բարելավել և զարգացնել համալսարանի ենթակառուցվածքները, որոնք կբավարարեն կրթական գործունեությունն ապահովող ժամանակակից պահանջները:

Խնդիր 1.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչ-ներ
Բարելավել և արդիա-կանացնել ուսումնագիտական գործընթացի իրականացումն ապահովող ենթակա-ռուցվածքները:	Արդիականացնել լաբորատոր պարապմունքների անցկացման համար անհրաժեշտ նյութատեխնի-կական բազան՝ ըստ մասնագի-տական ուղղությունների:	Ըստ մասնագիտական ուղղությունների վերա-զինված շուրջ 10 ուսումնական լաբորատորիա:
	Թարմացնել և ժամանակակից պահանջներին համապատասխան վերակահավորել համակարգչային լսարանները:	Շուրջ 10 նոր համակարգչային լսարանի առկա-յություն:
	Արդիականացնել մասնագիտական գիտական լաբորատորիաները ժամանակակից նյութատեխնիկական միջոցներով:	Արդիականացված 2 գիտական լաբորատորիա:
	Բարելավել ուսումնական մասնաշենքերի սանիտարահիգիենիկ և ջեռուցման համակարգերը:	Վերանորոգված և աշխատող սանհան-գույցներ:
		Կատարելագործված ջեռուցման համա-կարգի առկայություն:
	Արդիականացնել նիստերի դահլիճ-ների կահավորվածությունը:	Մուլտիմեդիալ միջոց-ներով վերակահա-վորված 2 նիստերի դահլիճ:
	Վերանորոգել մարզադահլիճները և արդիականացնել կահավորվա-ծությունը:	Համալսարանի մասնա-շենքերում վերանո-րոգված և վերակահա-վորված մարզադահ-լիճներ:
	Ապահովել հանրակացարանային պայմանների բարելավումը	Համալսարանի հանրակացարանում բարելավված պայմաններ

Խնդիր 2.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Ստեղծել և կատարելագործել Համալսարանի գիտակրթական գործունեությունն ապահովող ավտոմատացված տեղեկատվական համակարգեր	Ստեղծել գործուն էլեկտրոնային դեկանատ:	Արդյունավետ աշխատող էլեկտրոնային դեկանատ:
	Զարգացնել և արդիականացնել էլեկտրոնային գրադարանի հնարավորությունները և ռեսուրսային բազան:	Արդիականացված էլեկտրոնային գրադարանային ծառայություններ:
	Բարելավել և զարգացնել համալսարանի ներքին ցանցը:	Համալսարանում գործող ինտրանետի առկայություն:
	Արդիականացնել ուսանողների էլեկտրոնային ուսումնառության Moodle համակարգը:	Գործուն էլեկտրոնային ուսումնառության Moodle համակարգի առկայություն:

6. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Ռազմավարական նպատակ.

Ընդլայնել համալսարանի միջազգային ճանաչելիությունը, համագործակցության շրջանակն ու ձևաչափը, խթանել համալսարանի շահակիցների մասնակցությունը միջազգային ծրագրերին:

Խնդիր 1.	**Միջոցառումներ**	**Առաջընթացի գնահատման ցուցիչներ**
Ընդլայնել համալսարանի ճանաչելիությունը և համագործակցության շրջանակը:	Կնքել գործուն համագործակցության պայմանագրեր արտերկրյա և տեղական բուհերի ու կազմակերպությունների հետ:	Գործուն նոր պայմանագրեր:
	Ընդլայնել համագործակցության շրջանակը Մերձավոր Արևելքի և ասիական բուհերի հետ:	Գործուն նոր պայմանագրեր, համագործակցության իրական արդյունքներ (համատեղ համաժողովներ, դասախոսների և ուսանողների փոխանակումներ, համատեղ գիտակրթական ծրագրեր)

Խնդիր 2.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Ընդլայնել համալսարանի համագործակցության ձևաչափը:	Շարունակել համագործակցությունը Էրազմուս+ ՀԳ1 և ՀԳ2 ծրագրերի շրջանակներում:	Էրազմուս+ ՀԳ1 և ՀԳ2 ծրագրեր:
	Ունենալ ուսանողների և աշխատակիցների շարժունության և արտերկրում սովորելու/վերապատրաստվելու այլ բնույթի ծրագրեր:	Բացի էրազմուս + -ից, այլ միջազգային ծրագրեր (Հորիզոն - 2020):
	Ունենալ համալսարանում կրթություն ստացող օտարերկյա ուսանողներ:	ՀԱԱՀ-ում սովորող օտարերկրյա ուսանողներ:
	Ունենալ կրկնակի դիպլոմներ տրամադրող կրթական ծրագրեր:	Կրկնակի դիպլոմներ տրամադրող կրթական ծրագրեր:

Խնդիր. 3	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Խթանել համալսարանի շահակիցների մասնակցությունը միջազգային ծրագրերին:	Ավելացնել համալսարանի՝ օտար լեզուներին տիրապետող աշխատակիցների թիվը:	Օտար լեզուներին տիրապետող աշխատակիցներ:
	Ավելացնել համալսարանի՝ օտար լեզուներին տիրապետող ուսանողների թիվը:	Օտար լեզուներին տիրապետող ուսանողներ:

7. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Նպատակ

Կատարելագործել համալսարանի կառավարման համակարգը և ապահովել կառավարման արդյունավետությունը և թափանցիկությունը:

Խնդիր 1.	**Միջոցառումներ**	**Առաջընթացի գնահատման ցուցիչներ**
Բարելավել Համալսարանի կազմակերպական կառուցվածքը՝ ապահովելով կառավարման «վերևից ներքև» և «ներքևից վերև» սկզբունքները:	Օպտիմալացնել համալսարանի կազմակերպական կառուցվածքը, մշակել կառավարման արդյունավետ մեխանիզմներ:	Համալսարանի արդյունավետ աշխատող, գործուն կազմակերպական կառուցվածք:
	Ապահովել համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների փոխկապակցվածությունը և փոխգործունեությունը	Համալսարանում ներդված կառավարման արդյունավետ մեխանիզմներ և կառավարման համակարգ:
	Ապահովել «վերից ներքև» և «ներքևից վերև» կառավարման սկզբունքները՝ կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով:	Համալսարանի ստորաժանումներում տեղայնացման գործուն ռազմավարական ծրագրերի և դրանց իրականացման հաշվետվողականության ապահովում:
	Ապահովել ՀԱԱՀ զարգացման ռազմավարական ծրագրի տեղայնացումը կառուցվածքային ստորաբաժանումների մակարդակում:	
	Կառավարման գործընթացներում՝ տարբեր մակարդակներում բարձրացնել համալսարանի շահակիցների դերը:	
	Ապահովել կառավարման բոլոր մակարդակներում նորմատիվային հենքի վերանայումը և արդիականացումը:	

Խնդիր 2.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Ներդնել համալսարանական էլեկտրոնային կառավարման համակարգ:	Գործածության մեջ դնել համալսարանական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը:	Համալսարանի բոլոր տեսակի փաստաթղթերի կառավարման համար ներդրված և արդյունավետ աշխատող փաստաթղթաշրջանառության ավտոմատացված համակարգ:
	Ամբողջովին ներդնել համալսարանի միասնական էլեկտրոնային կառավարման համակարգը՝ համալսարանի որոշումների կայացման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով:	Համալսարանի բոլոր տեսակի գործընթացների ավտոմատացումը և դրանց ինտեգրվածությունն ապահովող գործուն միասնական ավտոմատացված համակարգ:

Խնդիր 3.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Ապահովել համալսարանի գործունեության հաշվետվողականությունը և թափանցիկությունը:	Բարելավել և զարգացնել համալսարանի տեղեկատվության ապահովման գործընթացները կառավարման բոլոր մակարդակներում:	Համալսարանի կառավարման տարբեր մակարդակների համար մշակված և արդիականացված տեղեկատվության և գործընթացների թափանցիկությունը ապահովող գործուն և արդյունավետ մեխանիզմների առկայություն և կիրառում:
	Ապահովել տեղեկատվության ապահովման թափանցիկության գործընթացը բոլոր շահակիցների համար:	Կոռուպցիոն ռիսկերն առավելագույն նվազեցնող արդյունավետ աշխատող թափանցիկության ապահովման գործիքակազմ:
	Գործածության մեջ դնել համալսարանի բարեվարքությանը վերաբերող նորմատիվային փաստաթղթերը, ապահովել դրանց կիրարկման թափանցիկությունը:	Մշակված և գործածության մեջ ներդրված հակակոռուպցիոն ծրագիր և դրա իրականացման հաշվետվողականության ապահովում:
	Մշակել և գործածության մեջ դնել համալսարանի հակակոռուպցիոն գործունեության ծրագիրը:	

Խնդիր 4.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Զարգացնել որակի կառավարման համակարգը՝ ներգրավելով համալսարանի հիմնական շահակից կողմերին տվյալ գործընթացներում:	Ներդնել համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներն ըստ ռազմավարական ուղղությունների՝ կիրառելով դրանք համալսարանի գործունեության տարեկան հաշվետվություններում:	Համալսարանի տարբեր ուղղությունների համար մշակված և ներդրված գնահատման առանցքային ցուցանիշների հիման վրա համալսարանի գործունեության մշտադիտարկում և տարեկան հաշվետվողականության ապահովում:
	Բարձրացնել կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտների արդյունավետությունը՝ վերանայելով և բարելավելով գնահատման մեխանիզմները և գործիքները:	Վերապատրաստված ներքին աուդիտորներ: Ներդրված արդյունավետ մեխանիզմների միջոցով կատարելագործված ներքին աուդիտորական համակարգի առկայություն:
	Ընդլայնել հիմնական շահակից կողմերի ընդգրկվածությունը որակի կառավարման համակարգի տարբեր մակարդակներում:	ՀԱԱՀ Որակի կառավարման գործընթացներում հիմնական շահակիցների ներգրավվածության աճ՝ 2017 թ.-ի նկատմամբ:
	Ապահովել համալսարանի շահակից կողմերի կարիքների բացահայտման գործընթացը, որը կնպաստի արդյունավետ որոշումների կայացմանը և բարելավման ծրագրերի մշակմանը:	Համալսարանի շահակից կողմերի կարիքների բացահայտման համակարգի առկայություն և հաշվետվողականության ապահովում:

8. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նպատակ

Ապահովել համալսարանի ֆինանսական համակարգի կայունությունը, բարձրացնել ֆինանսական հոսքերի կառավարման արդյունավետությունը՝ արդիականացնելով ֆինանսների կառավարման գործընթացը և ներգրավելով ֆինանսական հոսքեր արտաքին աղբյուրներից:

Խնդիր 1	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Համալսարանի ֆինանսական պլանավորումը և կառավարումը նպատակաուղղել համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների իրականացմանը:	Կատարելագործել համալսարանի գործունեության ֆինանսական պլանավորման գործընթացը՝ ապահովելով ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և նպատակաուղղված բաշխումն ըստ ռազմավարական ուղղությունների:	Համալսարանի նպատակային բաշխված բյուջե:
	Ֆինանսական ռեսուրսների՝ ըստ առաջնահերթության բաշխման հաշվին ապահովել նյութական և այլ տեսակի ռեսուրսների նպատակաուղղված բաշխումը:	Ֆինանսների կառավարման կատարելագործված և գործուն համակարգ:
	Կատարելագործել համալսարանի ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգը՝ ֆինանսական և այլ տեսակի ռեսուրսների արդյունավետ կառավարման նպատակով:	Ֆինանսական ռիսկերի կառավարման գործուն համակարգ:
	Ապահովել ռեսուրսախնայողական քաղաքականության իրականացում:	
	Ներդնել ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգ՝ համալսարանի ֆինանսական կայունությունն ապահովելու նպատակով:	

Խնդիր 2	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Ապահովել ֆինանսական հոսքեր արտաքին աղբյուր-ներից՝ դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու և ֆինանսական այլ արտաքին աղբյուրների հաշվին:	Ընդլայնել արտաբյուջետային ֆինանսական մուտքերը՝ ապահովելով համալսարանի ֆինանսական միջոցների կայունությունը և զարգացումը:	Արտաբյուջետային մուտքերի աճը 2017 թ.-ի նկատմամբ՝ առնվազն 8 %-ով:
	Բարձրացնել համալսարանի մասնակցության մակարդակը կրթական և գիտահետա-զոտական դրամաշնորհային ծրագրերին:	Գիտահետազոտական աշխատանքներին և հա-մալսարանի ինովացիոն գործունեությանն ուղ-ղված ֆինանսական միջոցների աճը 2017 թ.-ի նկատմամբ՝ առնվազն 10 %-ի չափով:
	Բարձրացնել համալսարանի աշխատակիցների աշխա-տավարձը՝ ֆինանսական արտաքին աղբյուրների ներ-գրավման և ընդլայնման հաշվին:	Միջազգային դրամա-շնորհային ծրագրերի հաշվին ֆինանսական միջոցների աճ 2017 թ.-ի նկատմամբ՝ առնվազն 8 %-ի չափով:
	Ներդնել նվիրատուների ինստիտուտ՝ ապահովելով համալսարանի ֆինանսական կայունությունը:	Ֆինանսական արտաքին աղբյուրների ընդլայնման հաշվին համալսարանի աշխատավարձի աճ 2017 թ.-ի նկատմամբ՝ առնվազն 15%-ի չափով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

19.12. 2017 թ. **№ 176/ԱԾ**

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 2018-2022 թթ. զարգացման ռազմավարական պլանի և ռազմավարական ծրագրի մշակման նպատակով

Հրամայում եմ՝

1. Ստեղծել Համալսարանի զարգացման պլանի և զարգացման ծրագրի մշակման աշխատանքների համակարգող հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Դավեյան Սմբատ	-	Ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
Պետրոսյան Դանիել	-	Հեռակա դեպարտամենտի պետ-պրոռեկտոր
Էֆենդյան Պարույր	-	Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր
Մելքոնյան Վաչագան	-	ՏՏ և ԻԾ կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
Կոսեմյան Սուրեն	-	ԿԲՌՊ և նորագույն տեխնոլոգիաների բաժնի վարիչ
Համբարձումյան Գարեգին	-	Արտաքին կապերի դեպարտամենտի պետ
Բավինա Օլգա	-	Գլխավոր հաշվապահ
Եղիազարյան Գուրգեն	-	Հող. և հողային կադաստրի ամբիոնի վարիչ
Մելիքյան Անդրեաս	-	Բուս. և բանջարաբուծության ամբիոնի վարիչ
Հովսեփյան Գոհար	-	Կադրերի և հատուկ բաժնի պետի տեղեկալ
Կոստանյան Կարինե	-	Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի դեկանի տեղակալ
Նիկողոսայան Էրիկ	-	Թերապյայի, վիրաբուժության և ծննդագիտ.ամբոինի դոցենտ

1. Հանձնաժողովին՝ (Ս.Դավեյան)

Մինչև 2018 թվականի հունվարի 31-ը ավարտել ռազմավարական պլանի և ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքները և սահմանված կարգով ներկայացնել հաստատման:

ՌԵԿՏՈՐ Ա.ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2012-2017 ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ (Strengths)

1. Որակի ապահովման մասնագիտացված անձնակազմի և անհրաժեշտ նորմատիվային/կարգավորիչ փաստաթղթերի առկայություն:
2. Որակի ապահովման համալսարանական համակարգի առկայություն և կառավարման մարմինների պատրաստակամությունն ուղղված համալսարանի որակի ապահովման համակարգի բարելավմանը:
3. Կրթական ծրագրերի մշակման, վերանայման և մոնիտորինգի համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսների, ընթացակարգերի, ուղեցույցների և կանոնակարգերի առկայություն:
4. Բակալավրի և մագիստրոսական վերանայված կրթական ծրագրերի ներդրումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:
5. Ազգային և միջազգային մակարդակներում փորձի փոխանակում, համագործակցություն եվրոպական, ամերիկյան երկրների մոտ 90 ագրարային համալսարանի հետ:
6. Ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի առկայություն:
7. Որոշ մասնագիտությունների համար շարժունության հնարավորություններ (A & M, WT):
8. Արտերկրում ուսուցանվող աշխատակիցների կողմից համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հետ սեմինարների, դասախոսությունների և դասընթացների կազմակերպում:
9. Համալսարանի աշխատակիցների մոտիվացիան գիտելիքների և ուսուցման մեթոդիկայի ձեռքբերման առումով:
10. Լեզվի ուսուցման կենտրոնի և համակարգչային դասասենյակների առկայություն:
11. Համալսարանում գիտական ներուժի և հետազոտական աշխատանքների կենտրոնացում, ինչպես նաև Համալսարանում լուրջ գիտական ներուժի առկայություն:
12. Կրթական ծրագրերի և դասընթացների նախագծման, իրականացման ու վերանայման համար համալսարանում հաստատված կանոնակարգերի և փաստաթղթերի ընթացակարգերի առկայություն:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ (Weeknesses)

1. Որակի ապահովման համակարգում շահակիցների ներգրավվածության ոչ բարձր մակարդակ:
2. Ակադեմիական շարժունության ոչ բավարար մակարդակ:
3. Կրթական ծրագրերը հավատարմագրված չեն:
4. Համալսարանում ֆինանսական և մարդկային ռեսուրսների սահմանափակում լայնամասշտաբ բարեփոխումների իրականացման համար:
5. Մեծածավալ հետազոտությունների անցկացման համար ֆինանսական ռեսուրսների սակավ լինելը, գիտահետազոտական լաբորատորիաների և նյութատեխնիկական օբյեկտների ոչ բավարար մակարդակ:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Opportunities)

1. Համալսարանի ներգրավում մի շարք միջազգային դրամաշնորհային ծրագրերում:
2. Տարբեր միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակում համալսարանի վարչական անձնակազմի կառավարման հմտությունների զարգացում:
3. Որակի ապահովման խնդիրների ընդլայնում մի շարք դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:
4. Տարբեր դրամաշնորհային ծրագրերի միջոցով անհրաժեշտ ռեսուրսների շարունակական համալրում:
5. Բոլոնիայի գործընթացի զարգացման հիման վրա բարենպաստ պայմանների ստեղծում՝ այլ բուհերի հետ համագործակցության համար:
6. Արտաքին փորձի ուսումնասիրության հիման վրա ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի բարելավում:
7. Միջազգային գործընկեր համալսարանների և կազմակերպությունների հետ հուշագրերի և համագործակցության ընդլայնում:
8. Որակի ապահովման կենտրոնի ստեղծումից հետո բուհական գործունեության ընթացքում որակյալ մշակույթի տարածում:
9. Համալսարանի գովազդային հնարավորությունների ակտիվացում ԶԼՄ-ների և վեբ-կայքերի օգտագործմամբ:

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ (ՎՏԱՆԳՆԵՐ) ((Threats)

1. Համալսարանում ֆինանսական միջոցների սահմանափակ լինելը և դրա կախվածությունն ուսանողների թվաքանակից:
2. Համալսարանի և աշխատաշուկայի միջև ոչ ուժեղ կապի առկայություն:
3. Աշխատաշուկայում համապատասխան մասնագետների պահանջարկի նվազում
4. Միջազգային համագործակցության համար անհրաժեշտ անձնակազմի լեզվական հմտությունների ոչ բավարար լինելը:
5. Դիմորդների և ուսանողների թվաքանակի նվազում:
6. Էլեկտրաէներգիայի, ջրի և գազի կտրուկ աճ: